

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## 1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

- 1.1 ՀՀ կառավարության որոշումներ ----- 2
- 1.2 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ----- 4

## 2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 8

- 2.1 Ծրագրեր և կատարողական ----- 8
- 2.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների ----- 10
- 2.3 Միջազգային համագործակցություն ----- 10
- 2.4 Մաքսային թվերի համառոտագիր ----- 12

# 1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 ԶՅ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև հայ-հնդկական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն հիմնելու մասին փոխըմբռնման հուշագրով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը հաստատելու մասին» ԶՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	03 փետրվարի 2011թ, N 95-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 11 (814), 23.02.2011թ.

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է ԶՅ կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև հայ-հնդկական տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն

հիմնելու մասին փոխըմբռնման հուշագրով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման կարգը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 7-ի N 720 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԶՅ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	03 մարտի 2011թ, N 179-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 16 (819), 16.03.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ մաքսատուրքի վճարումից ազատվող՝ առևտրային կազմակերպությունների կողմից իրենց կանոնադրական հիմնադրամի համալրմանն ուղղված ապրանքներ են սահմանվում հաղորդող ապարատներ՝ ռադիո կամ հեռուստահաղորդումների համար, իր մեջ ընդգրկող կամ չընդգրկող, ձայնագրող կամ ձայն վերարտադրող ապարատներ, հեռուստատեսային խցիկները, թվային խցիկները և ձայնագրող տեսախցիկները, ընդունող ապարատուրան՝ ռադիոհեռարձակման համար, նույն կորպուսում համատեղված կամ չհամատեղված ձայնագրող կամ ձայն վերարտադրող ապարատուրայով կամ ժամացույցներով մոնիթորները և պրոյեկտորները, իր մեջ չընդգրկող ընդունիչ հեռուստատեսային ապարատուրան,



ընդունիչ ապարատուրան՝ հեռուստատեսային կապի համար, իր մեջ ընդգրկող կամ

չընդգրկող լայնահեռարձակող ռադիոընդունիչ կամ ձայնի կամ պատկերի գրանցման կամ վերարտադրության ապարատուրան:

Մաքսատուրքի վճարումից չեն ազատվում հեռուստատեսային խցիկները, թվային խցիկները և ձայնագրող տեսախցիկները:

Փաստաթուղթ	«Պետական ռեգիստրի կողմից պետական գրանցում ստացած կազմակերպությունների և հաշվառված անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման (հաշվառման) մասին տեղեկությունները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	24 մարտի 2011թ, N 309-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 20 (823), 13.04.2011թ.
Ուժի մեջ է	2011 թվականի ապրիլի 1-ից

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է պետական ռեգիստրի կողմից պետական գրանցում ստացած կազմակերպությունների և հաշվառված անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման (հաշվառման) մասին տեղեկությունները ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին տրամադրելու կարգը և տեղեկությունների ցանկը: Նշված կարգի համաձայն՝ պետական ռեգիստրի կողմից կազմակերպությունների պետական գրանցման և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին վերոնշյալ ցանկում նշված

տեղեկությունները տրամադրվում են առցանց ռեժիմով անմիջապես: Այդ տեղեկությունները ստացվելուց հետո ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը պետական ռեգիստրին է տրամադրում գրանցվող (հաշվառվող) կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) ՀՎՀՀ-ն և հաշվառման վայրի հարկային մարմնի անվանումը: Ցանկում նշված տեղեկությունների փոփոխության դեպքում դրանք տրամադրվում են փոփոխության գրանցման օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1330-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	31 մարտի 2011թ, N 343-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 22 (825), 20.04.2011թ.
Ուժի մեջ է	2011 թվականի մայիսի 1-ից և գործողությունը տարածվում է նաև 2011 թվականի ապրիլ ամսվա ընթացքում տրամադրված ՀԴՄ կտրոնների հետ կապված հարաբերությունների վրա

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է, որ հարկային մարմնում գրանցված հսկիչ-դրամարկային մեքենաների տրամադրած կտրոնների հատուկ համարների վիճակահանության անցկացման և վիճակահանության արդյունքում շահող կտրոններ տիրապետող ֆիզիկական անձանց տրամադրվում է միայն պարզևավճար (նախկինում՝ նաև բոնուսներ): Պարզևավճար տրամադրող մարմին է հանդիսանում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչությունը:



## 1.2 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության 1998 թվականի հունիսի 12-ի թիվ 71-ՄՎԸ հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի հրաման
Ամսաթիվը և համարը	26 հունվարի 2011թ, N 22-Լ
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 5 (388), 01.03.2011թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվում ՀՀ մաքսային վարչության 12.06.1998թ. «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով փոխադրվող ապրանքների բեռնային մաքսային հայտարարագրման, ըստ բացթողման մաքսային ռեժիմների բեռնային մաքսային հայտարարագրի լրացման կարգը հաստատելու մասին» թիվ 71-ՄՎԸ հրամանում, որով սահմանվում է ՀՀ մաքսային սահմանով փոխադրվող տրանսպորտային միջոցների (նախկինում՝ միայն ապրանքների) մաքսային հայտարարագրման կարգը: Սահմանվում է, որ ՀՀ մաք-

սային սահմանով փոխադրվող ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումը ֆիզիկական անձանց կողմից կատարվում է այն սահմանային մաքսային կետերում և մաքսատներում, որոնցով տեղափոխվում են հայտարարագրման ենթակա ապրանքները և տրանսպորտային միջոցները կամ մաքսատներում, որոնք սահմանված կարգով լրացված ներքին տարանցման փաստաթղթով (փոխադրման ամփոփագրով) տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների համար հանդիսանում են նշանակման մաքսային մարմին:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2004 թվականի մարտի 5-ի N 1-05/5-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	02 փետրվարի 2011թ, N 26-Լ
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 5 (388), 01.03.2011թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի 05.03.2004թ. «Բեռնազինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճար-

ների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների վերաբերյալ» հրահանգը հաստատելու մասին» N 1-05/05-Ն հրամանը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի 2003 թվականի հունիսի 4-ի «Մաքսային ձևակերպումների իրականացման վայրերը սահմանելու մասին» թիվ 03/42-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	04 փետրվարի 2011թ, N 32-Լ
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 5 (388), 01.03.2011թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվում է, որ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների ժամանակ որպես

զևսման և հաշվառման վայրեր են հանդիսանում մաքսային հսկողության (նախկինում՝ մաքսային պահեստների) տարածքները:

Փաստաթուղթ	«Հաստատագրված վճարով հարկվող գործունեության վերսկսման կամ դադարեցման մասին դիմումի ձևը և լրացման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	11 փետրվարի 2011թ, N 50-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 5 (388), 01.03.2011թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում են հաստատագրված վճարով հարկվող գործունեության

վերսկսման կամ դադարեցման մասին դիմումի ձևը և լրացման կարգը:

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	11 փետրվարի 2011թ, N 51-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 5 (388), 01.03.2011թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում է ԱԱՀ վճարող համարվելու համար ներկայացվող հայտարարության ձևը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N 3660-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	15 փետրվարի 2011թ, N 55-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 5 (388), 01.03.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Հրամանով մի շարք փոփոխություններ են կատարվում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.12.2009թ. «Հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների, սահմանային չափի ցու-

ցանիչների մասին հայտարարության ձևերը և դրանց լրացման կարգերը հաստատելու, հարկային մարմնի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 3660-Ն հրամանում:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր հարկային պետական ծառայության պետի 2005 թվականի հունիսի 21-ի N 1-05/06-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	15 փետրվարի 2011թ, N 56-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 5 (388), 01.03.2011թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություններ են կատարվում ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի 21.06.2005թ. «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված

վճարի հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը հաստատելու մասին» N 1-05/06-Ն հրամանում:

Փաստաթուղթ	«Հարկման նպատակով իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին փոխկապակցված համարելու հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	22 հունվարի 2011թ, 31 հունվարի 2011թ, N 5
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № (388), 01.03.2011թ.

### Համառոտ նկարագիր

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 11.1-րդ հոդվածի դրույթների կիրառման հետ կապված իրավաբանական անձանց և (կամ) անհատ ձեռնարկատերերին փոխկապակցված համարելու (նրանց նկատմամբ ԱԱՀ-ի շեմը չկիրառելու) հարցերի ճշտման նպատակով պարզաբանվում է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 11.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ իրավաբանական անձի փոխկապակցված անձինք են կառավարման մարմնի անդամը, ինչպես նաև միանձնյա գործադիր մարմնի իրավասություններն իրականացնող անձը: Օրենքի այս դրույթի հիմքով իրավաբանական անձի կառավարման մարմնի անդամը, ինչպես նաև իրավաբանական անձի գործադիր մարմնի իրավասություններն իրականացնող անձը հարկման նպատակով դիտվում է փոխկապակցված իրավաբանական անձին և, հետևաբար, նրանց (իրավաբանական անձի և ֆիզիկական անձի) նկատմամբ ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում, եթե իրավաբանական անձի կառավարման մարմնի անդամ հանդիսացող կամ միանձնյա գործադիր մարմնի իրավասություններն իրականացնող ֆիզի-



կական անձը միաժամանակ համարվում է անհատ ձեռնարկատեր: Այն դեպքում, երբ իրավաբանական անձի կառավարման մարմնի անդամ հանդիսացող կամ միանձնյա գործադիր մարմնի իրավասություններն իրականացնող ֆիզիկական անձը անհատ ձեռնարկատեր չի հանդիսանում, ապա ինքնին իրավաբանական անձի կառավարման

մարմնի անդամ կամ միանձնյա գործադիր մարմնի իրավասություններն իրականացնող անձ հանդիսանալը տվյալ իրավաբանական անձին չի զրկում ԱԱԶ-ի շեմը կիրառելու հնարավորությունից: Այս իմաստով անձին կառավարման մարմնի անդամ կամ միանձնյա գործադիր մարմնի իրավասությ-

յուններն իրականացնող անձ համարելու համար հիմք է ընդունվում նրա և իրավաբանական անձի միջև տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագիրը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 4-ի N 1417-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	12 մարտի 2011թ., N 651-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N98(391), 15.04.2011թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2010թ., հունիսի 4-ի «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների վերաբերյալ հրահանգը հաստատելու և ՀՀ պե-

տական եկամուտների նախարարի 2000թ. հոկտեմբերի 20-ի N02/1291 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1417-Ն հրամանում:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2009 թվականի փետրվարի 2-ի N 28-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	23 մարտի 2011թ., N 693-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N98(391), 15.04.2011թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով ուժը կորցրած է ճանաչվում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2009թ. փետրվարի 2-ի «Արտոնագրային վճար վճարող համարվելու համար հարկային մարմին ներկայացվող դիմում-հայտարարության, արտոնագրային վճար վճարող համարվող ֆիզիկական անձանց հարկային մարմնի կող-

մից տրվող արտոնագրի և արտոնագրային վճար վճարողների կողմից պարտադիր սոցիալական ապահովության վճարներ կատարելու պարտավորություն ստանձնելու մասին դիմումի ձևերը սահմանելու մասին» N 28-Ն հրամանը:

Փաստաթուղթ	«Ակցիզային հարկով հարկված հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի հաշվանցման վերաբերյալ» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	24 մարտի 2011թ., N 17
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N98(391), 15.04.2011թ.

## Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է՝ քանի որ ակցիզային հարկ վճարող տնտեսվարող սուբյեկտի կողմից ձեռքբերված (ներմուծված) հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի գումարը հաշվանցելու սահմանափակումներ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված չեն, օրենքով սահմանված կարգով համապատասխան լիցենզիա ունեցող և ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող անձինք հաշվարկված ակցիզային հարկի գումարից կարող են օրենքով սահմանված կարգով հաշվանցել մինչև արտադրության սկսելու կամ ակցիզային հարկի գծով պարտավորության առաջացման պահը ձեռքբերված (այդ թվում՝ ներմուծված) հումքի դիմաց ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում և օրենսդրությամբ սահմանված հաշվար-

կային փաստաթղթերում առանձնացված ակցիզային հարկի գումարները: Հումքի ներմուծման դեպքում հաշվանցման համար պարտադիր պայման է ակցիզային հարկի վճարումը, իսկ ՀՀ տարածքում հումքի ձեռքբերման դեպքում՝ բանկային վճարմամբ հումքի ձեռքբերումը:

Մինչև ակցիզային հարկի գծով պարտավորության առաջացման պահը հումքի մասին ապրանքների ձեռքբերման (այդ թվում՝ ներմուծման) դիմաց վճարված ակցիզային հարկի գումարները արտադրողների կողմից արտացոլվում են սույն պարզաբանման հրապարակման պահից հետո ներկայացվող որևէ հաշվետու ժամանակաշրջանի ակցիզային հարկի հաշվարկում՝ որպես հաշվանցվող ակցիզային հարկի ավելացում:

## 2. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

### 2.1 | Ծրագրեր և կատարողական

#### 2.1.1 | Ծրագրեր և կատարողական /հարկային ծառայության մասով/ Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը շարունակել է աշխատանքները Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքների շարունակական իրագործման ուղղությամբ: Մասնավորապես, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 04.03.11թ. թիվ 644-Ա հրամանով հաստատվել են Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման շրջանակներում մշակված տեխնիկական առաջադրանքները: Տեխնիկական առաջադրանքների կատարման հետագա ընթացքն ապահովելու նպատակով նախատեսվել է ստեղծել համապատասխան աշխատանքային խմբեր, որին կհաջորդի համակարգչային ծրագրերի մշակման և ներդրման գործընթացը:

Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման շրջանակներում աշխատանքներ են տարվել նաև ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգման ենթակա հարկ





վճարողների ընտրության համակարգի ներդրման ուղղությամբ: Մասնավորապես մշակված տեխնիկական առաջադրանքի հիման վրա հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կապալառու կազմակերպության կողմից իրականացվել են ծրագրի թեստավորման աշխատանքները և 2011թ. փետրվար ամսին հանձնվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 14.10.09թ. N 2737-Ա հրամանով ստեղծված «Ռիսկերի կառավարման, ստուգման ելթակա հարկ վճարողների ընտրողականության համակարգի ստեղծման և ներդրման» աշխատանքային խմբին: Ներկայումս աշխատանքային խումբը ԱՄՆ ՄՉԳ փորձագետների հետ համատեղ իրականացնում է ծրագրի թեստավորման աշխատանքները:

**Հարկ վճարողների սպասարկման կենտրոնի գործարկում**

ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից հաստատված հարկ վճարողների սպասարկման ռազմավարության ներքո ընդունված ՀՀ հարկային համակարգում հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծման ծրագրի շրջանակներում 2011թ. սկզբին գործարկվել է Վանաձորի տարածքային հարկային տեսչությունում հարկ վճարողների սպասարկման կենտրոնը: Շարունակվել են աշխատանքները հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծման, ինչպես նաև վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնման ուղղությամբ: Մասնավորապես, Արաբկիրի ՀՏ-ում հարկ վճարողների սպասարկման կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների շրջանակում 2011թ փետրվար ամսվա ընթացքում կազմակերպվել է սեմինար՝ «Արտոնագրային վճարների» մասին ՀՀ օրենքի դրույթների պարզաբանումների վերաբերյալ:



**Հարկային մարմնի ներքին կառավարման արդյունավետ համակարգի ներդրում**

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 01.02.11թ. թիվ 1/79 հրամանով հաստատվել են վերադաս մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների վերանայված գործառույթները: Արդյունքում ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնում առանձնացվել են թվով 17 վարչություններ, հնարավորինս բացառվել են կրկնությունները կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթներում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 03.03.11թ. թիվ 642-Ա հրամանով հաստատվել է հարկային և մաքսային ծառայողների պաշտոնական առաջխաղացման կարգը, որով կանոնակարգվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային ծառայողների տարեկան աշխատանքային ծրագրի կատարողականի և կառավարչական հմտությունների, մասնագիտական պատրաստվածության և որակավորման մակարդակի գնահատման համակարգերի հիման վրա պաշտոնական առաջխաղացման հետ կապված ընդհանուր հարաբերությունները:

**2.1.2 | Ծրագրեր և կատարողականություն /մաքսային ծառայության մասով/**

Սույն թվականի մարտի 9-13-ը ապահովվել է մասնակցություն ք.Ստամբուլում (Թուրքիայի Հանրապետություն) կազմակերպված Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության մաքսային հարցերի աշխատանքային խմբի հանդիպմանը: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից

հայտարարվել էր միջազգային մրցույթ՝ «Բազրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» սահմանային անցակետերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար: Մրցույթին մասնակցելու համար ստացվել են հայտեր հետևյալ 5 պետություններից՝ Անգլիա, Իտալիա, Հունաստան, Էստոնիա և Լիտվա: Ներկայումս հայտերն ուսումնասիրման փուլում են:

## 2.2 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

### 2.2.1 | Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /հարկային ծառայության մասով/

21.02.2011թ-ից մինչև 20.04.2011թ. ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են 12 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում 26 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 21.02.2011թ-

ից մինչև 20.04.2011թ-ն ընկած ժամանակահատվածում լսվել է 40 դիմում-գանգատ, որից.

- բավարարվել է 20,
- բավարարվել է մասնակի 1,
- մերժվել է 10,
- կարճվել է 9 դիմում-գանգատ:

### 2.3 | Միջազգային համագործակցություն

2011թ. մարտի 10-ին Երևանում տեղի է ունեցել հանդիպում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանի և Մոսկվայում Ֆրանսիայի դեսպանատան մաքսային կցորդ Ալեքս Ժենի միջև: Հանդիպման ընթացքում քննարկվել են հարցեր՝ նվիրված երկու երկրների մաքսային ծառայությունների միջև համագործակցության խորացմանը:

Հայկական կողմը կարևորել է երկու երկրների մաքսային ծառայությունների միջև մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության համաձայնագրի ստորագրման անհրաժեշտությունը: Կողմերը քննարկել են նաև ՀՀ-ում մաքսային լաբորատորիաներ ստեղծելու ուղղությամբ ֆրանսիական կողմի հետ համագործակցությունների հեռանկարները:

2011թ. մարտի 29-ից 30-ը Լյուքսեմբուրգում տեղի է ունեցել Համաշխարհային մաքսային կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանի պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների համաժողով, որին մասնակցել է ՀՀ ԿԱ ՊԵԿ պատվիրակությունը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանի գլխավորությամբ: Համաժողովում քննարկվել են մի շարք թեմաներ սահմանների համատեղ կառավարման, Կիոտոյի վերանայված կոնվենցիայի դրույթների գործնական կիրարկման, օդային ճանապարհով իրականացվող

բեռնափոխադրումների անվտանգության և մաքսանենգության դեմ պայքարի, ԱՏԳ իրականացնողների կողմից ներկայացվող կեղծված հաշիվ-ապրանքագրերի դեմ Եվրոպական տարածաշրջանի երկրների համար ընդհանուր մեխանիզմներ մշակելու անհրաժեշտության, ինչպես նաև տարածաշրջանային փոքր մաքսային միություններ ստեղծելու անհրաժեշտության և օգտակարության վերաբերյալ: Համաժողովում որոշվել է, որ ՀՄԿ անդամ-երկրները, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը, պետք է քննարկեն և ՀՄԿ-ին ներկայացնեն ՀՄԿ Կարողությունների հզորացման և առևտրի դյուրացման վարչությունների հետագա գործունեության վերաբերյալ իրենց առաջարկները: Համաժողովի ժամանակ առաջարկվել է ՀՄԿ անդամ բոլոր այն պետություններին, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությանը, որոնք դեռևս չեն միացել Կիոտոյի վերանայված և Յոհաննեսբուրգի կոնվենցիաներին, քննարկել դրանց միանալու նպատակահարմարությունը: Այդ կապակցությամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն հայտնել է, որ Կիոտոյի վերանայված կոնվենցիայի տեքստը թարգմանվել է հայերեն և այժմ համապատասխան աշխատանքներ են տարվում անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը սկսելու ուղղությամբ, իսկ Յոհաննեսբուրգի կոնվենցիային միանալու նպատակահար-

մարության հարցը կքննարկվի ավելի ուշ: Համաժողովի շրջանակներում ՀՀ ԿԱ ՊԵԿ պատվիրակությունը առանձնագրույցներ է ունեցել ՀՄԿ գլխավոր քարտուղար Կունիո Միկուրիայի, Լեհաստանի, Իսրայելի, Էստոնիայի, ՌԴ և Ուկրաինայի մաքսային ծառայությունների ներկայացուցիչների հետ: ՀՄԿ գլխավոր քարտուղարի հետ առանձնագրույցի ժամանակ ներկայացվել է Դիլիջանում ՊԵԿ-ի կողմից կառուցվող ուսումնական կենտրոնի մասին տեղեկատվություն, քննարկվել են դրա շահագործման և այնտեղ ՀՄԿ շրջանակներում տարբեր մակարդակի դասընթացներ և աշխատանքային հանդիպումներ անցկացնելու հետ կապված հարցեր: Վերջինիս կողմից հայկական կողմի նախաձեռնությունն արժանացել է հավանության, ձեռք են բերվել պայմանավորվածություններ կենտրոնի բացումից հետո անցկացնել քննարկումներ այդ շրջանակներում համագործակցության ուղիների և ձևաչափի վերաբերյալ:

2011թ. ապրիլի 14-15-ը Բուդապեշտում տեղի է ունեցել ԵՄ արևելյան սահմանի մաքսային ծառայությունների համագործակցության սեմինար, որին մասնակցել են նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացուցիչները՝ ՊԵԿ նախագահ Գագիկ Խաչատրյանի գլխավորությամբ: Սեմինարի ընթացքում քննարկվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են ծխախոտի և այլ ապրանքատեսակների մաքսանենգության կանխարգելման ոլորտում համագործակցությունը, պայքարը կեղծված ապրանքների դեմ, սահմանների վերահսկումը, ռիսկերի կառավարումը Եվրամիության անդամ-երկրներում, տեղեկատվության փոխանակումը ԵՄ մաքսային միության և երրորդ երկրների միջև և այլն: Սեմինարի ընթացքում կարևորվել է ոչ ԵՄ անդամ-երկրների միջև տարածաշրջանային փոքր կամ միջին միությունների ստեղծման գաղափարը, ինչը հետագայում հնարավորություն կտա այդ միություններին ավելի արագ և համաձայնեցված ինտեգրվելու ԵՄ ընդհանուր մաքսային միությանը: Դրան զուգահեռ նշվել է նաև, որ Եվրամիությունը պետք է առավելագույն ճկունություն դրսևորի, որպեսզի ԵՄ արևելյան սահմանի և Արևելյան գործընկերության շրջանակներում ընդգրկված անդամ-պետությունների հետ համագործակցության ժամանակ հաշվի առնվեն նաև տեղական, երկկողմ կամ



բազմակողմ պայմանավորվածությունները: Առանձնահատուկ քննարկման առարկա են եղել նաև Եվրամիության տարածք մաքսանենգ ճանապարհով ներմուծվող ծխախոտի խմբաքանակների և կեղծված-ապրանքների ներմուծման դեմ պայքարի թեմաները: Այս համատեքստում մեծապես կարևորվել է վերահսկելի մատակարարման, տեղափոխվող ապրանքների մասին նախնական տեղեկատվության ստացման, բիզնեսի ներկայացուցիչների կողմից անհրաժեշտ ինֆորմացիայի տրամադրման, ինչպես նաև ոչ ԵՄ անդամ-պետությունների համապատասխան ուժային ծառայությունների հետ օպերատիվ համագործակցության անհրաժեշտությունը:

Սեմինարին մասնակցող բոլոր պետություններին առաջարկվել է ակտիվացնել համագործակցությունը հետևյալ առաջնային համարվող ոլորտներում.

- սահուն և ապահով առևտրային ուղղությունների մշակում և զարգացում,
- ռիսկերի կառավարում և պայքար մաքսանենգության ու կեղծված ապրանքների դեմ,
- ներդրումներ մաքսային ոլորտի բարեփոխումներում:

Մասնակիցներին առաջարկվել է նաև քայլեր ձեռնարկել հնարավորության դեպքում սահմանային անցակետերում համատեղ և միանման գործողությունների իրականացման, բարձր հարկով հարկվող ապրանքների մաքսանենգության դեմ պայքարի ոլորտում

համատեղ օպերատիվ խմբեր ստեղծելու, առկա խմբերում աշխատակիցների քանակն ավելացնելու, «Ընդհանուր տարանցման գործընթացի» համաձայնագրին միանալու նպատակով բանակցություններ սկսելու, ինչպես նաև մաքսային ոլորտում ազգային ռազմավարական ծրագրեր մշակելիս ԵՄ

առաջավոր փորձը և անհրաժեշտ փորձագետներին ներգրավելու ուղղությամբ: Սեմինարի ընթացքում տեղի են ունեցել նաև հանդիպումներ Հունգարիայի, Բուլղարիայի, Լիտվայի, Նիդեռլանդների, Լեհաստանի և Խորվաթիայի մաքսային ծառայությունների ներկայացուցիչների հետ:

## 2.4 | Մաքսային թվերի համառոտագիր

### 2.4.1 | Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2010թ.		2011թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ %	
		Հունվար-փետրվար	փետրվար	հունվար-փետրվար	փետրվար	հունվար-փետրվար	փետրվար
1	2	3	4	5	6	7	
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	33 385	15 487	32 217	17 013	96.5	109.9
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	215 481	104 094	252 496	137 361	117.2	132.0
2.1	Արտահանում (մլն դրամ)	47 074	25 825	56 869	32 888	120.8	127.4
2.2	Ներմուծում (մլն դրամ)	168 407	78 269	195 627	104 472	116.2	133.5
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	4 763	3 075	5 498	3 496	115.4	113.7

1	Ցուցանիշ	2010թ.		2011թ.		Աճը նախորդ տարվա նկատմամբ %	
		Հունվար-մարտ	մարտ	հունվար-մարտ	մարտ	հունվար-մարտ	մարտ
1	2	3	4	5	6	7	
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	54 472	20 987	53 486	21 269	98.2	101.3
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	264 140	105 885	414 600	162 211	157.0	153.2
2.1	Արտահանում (մլն դրամ)	43 249	17 295	91 392	34 523	211.3	199.6
2.2	Ներմուծում (մլն դրամ)	220 891	88 590	323 208	127 688	146.3	144.1
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	8 031	3 253	10 163	6 050	126.5	186.0